

(ՃՂԱ): — Հաւասարապէս անսուրբ էին եւ սողունք, ինչպէս օձ, գորտ, մողես, մուկե եւ այլք (Ընդհ. 158), համաձայն հին օրինաց (Ղեւտ. ԺԱ, 30): — Նոյն արհամարհութեան արժանացած էին ջրային զետուէր եւս (Մազ. 214. Լմբր. Ատեն. 201): — Վերջապէս Ալաւկայ որդին հրէական ոգևոյժ (Ղեւտ. ԺԹ, 19) պիղծ կը համարի նաեւ այն ուտելի անասունքը՝ որ զուգուած էին իրենց աննմանից հետ, եւ կը հրամայէ անոնց միսը շներու ձգել կամ այլազգեաց վաճառել (Կե):

Գ. Այդ սահմանը սակայն բացարձակ չէր ամէն Հայոց համար: Մեր վարդապետաց հրէական պատուիրանաց առջեւ բոլորն ալ միահամուռ չպիտի խոնարհէին. մանաւանդ անոնք՝ որ արեւմտեայց հետ աւելի կամ նուազ մերձաւոր յարաբերութեան մէջ գտնուելով, թօթափած էին տոհմային նախապաշարումները, եւ ընտելացած անոնց անխտրականութեան հետ: Ասոցմէ էր թոռնիկ մամիկոնեան ԺԱ դարուն, որ քաղկեդոնական լինելով՝ չէր ակնածեր ուտել ծովային զեռունները, «զխէչս եւ զքառածետս եւ զօձասանդրս եւ զկրայակիրս, եւ զայլ զբիւրս ի բզզոց անզարդ զեռունս», ինչպէս կը դիտէր անոր Գր. Մագիստրոս (214): Լամբրոնա-